06.07.2022թ.
ք. Կապան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հունիսի 29-ին կայացել է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու հերթական նիստը: Նիստին մասնակցել են ավագանու 27 անդամներից 23-ը: Օրակարգում ընդգրկված բոլոր 21 նախագծերը դրվեցին քվեարկության և ընդունվեցին ավագանու կողմից: Ավագանու նիստի ողջ ընթացքը օրենքով սահմանված կարգի համաձայն հեռարձակվել է:

2022 թվականի հուլիսի 6-ի դրությամբ ընդունված որոշումների տակ ստորագրել են համայնքի ավագանու՝ նիստին մասնակցած անդամներից 22-ը, քանի որ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, ավագանու անդամ Գոռ Թադևոսյանը գտնվում է հերթական արձակուրդում և մեկնել է ք. Երևան: Գ. Թադևոսյանը խնդրել է ավագանու նիստի ընթացքում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իր կողմից կատարած քվեարկությունը ընդունել ի գիտություն և համարել հիմք:

Հաշվի առնելով համայնքի ընդունած որոշումները ՀՀ Սյունիքի մարզպետարան օրենքով սահմանված ժամկետներում ներկայացնելու պահանջը, որոշվեց դրանք ուղարկել առանց Գ. Թադևոսյանի ստորագրության:

Կապան համայնքի ղեկավար՝ Գ. Փարսյան

Աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ՝ Ա. Գաբրիելյան

Աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխ. մասն. Գ. Հովհաննիսյան